

ՆՈՐ ԱՎԵԾԱՔԵՐ

Բ. ՏԱՐԻ

ՀԱՆԷՊ, 5 ՀՈԿՏ., 1929

ԹԻԻ 19

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՄԵՐ ԸՆԹԵՐՅՈՂՆԵՐՈՒՆ

ՏՐ. Ճ. Է. ՄԷՐԻԿ

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ՏՊՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՎԵՐՋԱՑՈՂ ՄԻՈՒԹԵՆԷՆ

ՓՐՕՖ. Ջ. Ա. ՊԷՋՃԵԱՆ

ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐ ԻՆՉ ԿԸ ԽՈՐՀԻՆ ՀՈԳ. ԱՐԺԷՔՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

Տ. Ճ. Խ.

ԳՆՉՈՒՆԵՐԸ

ԿՐՕՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

ԳԻՏԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

ԿԵԱՆՔԻ ՇՈՂԵՐ

ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԿԵԱՆՔ

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷՋԸ

NOR AVEDAPER
BOITE POSTALE 287, ALEP, SYRIE

ՏՊԱՐԱՆ «ԳՈՒԼԺՃ» ՀԱՆԷՊ

ՆՈՐ ԱԻԵՏԱԲԵՐ

Կրօնարարոյական, կրթական գիտական պարբերական

Տէր և Տնօրէն

Վեր. Կ. Յ. Յարութեան

Պատասխանատու — Խմբագիր

Տ. Ճ. Խրլոբեան

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ. —

Սուրիա, տարեկան 1.50 Սուրիական հսկի:

Արտասահման տարեկան 1.50 տոլար:

ԿԱՐԵՒՈՐ

Վեր. Ա. Շիրաճեան կը խնդրէ հո-
վիւններէն և քարոզիչներէն որ ընդօրոյթ
իրեն զրկեն իրենց եկեղեցիներուն վի-
ճակագրական տախտակները:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Թերթիա 19րդ. թիւը ատենին հրա-
տարակել անկարելի եղած ըլլալով, յա-
ջարդին՝ թիւ 20-21ը միասին պիտի հրա-
տարակուին:

ԿԸ ՓՆՏՈՒԻ

Կը փնտռուի բնիկ Արաբկիրցի Վար-
դանոյ՝ ծնեալ Տէր Յովհաննէսեանը,
այժմ իբր 30 տարեկան, մօր կողմանէ
Տէր Ղեւոնդի թոռ, իսկ հօր կողմանէ՝
Տէր Յովհաննէսեաններէ:

Փնտռողն է՝ իր մեծ եղբայրը Յով-
հաննէս Տէր Յովհաննէսեանը, նոյնպէս
Արաբկիրցի, այժմ իբր 33 տարեկան:

Կը խնդրուի տեղեկացնել՝ Երև. —

J. Bulla,
21, Rue Poriaz,
Pangalti,
Istambul
(Turquie)

ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ

Բ. ՏԱՐԻ

ՀԱՆԼԵՊ, 5 ՀՈՒՏ., 1929

ԹԻԻ 19

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՄԵՐ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒՆ

Երեք տարի առաջ Միութիւնը հինգ անգամ է բաղկացեալ յանձնախումբ մը ընտրեց թերթի մը հրատարակութեան համար: Յանձնախումբը իր առջեւը ունէր երեք խնդիրներ, զրամ գտնել, արտօնադիր ստանալ, խմբագիր մը ճարել: Որոշուեցաւ թերթին տպագրական ծախքին համար անհրաժեշտ գումարը ապահովել բաժնեդիւններէն, բայց մինչեւ որ բաժնեդիւնները այս ծախքը զոյգելու բաւական ըլլան, որոշուեցաւ անհատներէ և եկեղեցիներէն խոստումներ առնել հաւանական բացը զոյգելու համար: Արտօնութիւնը ստանալ որոշուեցաւ Հալէպի Ազիզիյէի Եկեղեցւոյն հովիւին անունով: Թերթին խմբագրութեան գաղով նախ որոշուեցաւ մասնախումբի մը միջոցաւ կատարել զայն: Բայց այս անգործնական գտնուեցաւ: մանաւանդ որ արտօնութեան խնդրուողին մէջ խմբագրի մը անունը պէտք էր յիշուի: Գործին համար արամադրելի մէկը չի կար: Այս միջոցին Պոլսոյ մէջ Պօրտի Հրատարակչական Բաժինէն խնդրուեցաւ որ հին «Աւետարներ»ի տնւնը գործածելու համար արտօնութիւն տայ: հաստատական եւ քաջալերական պատասխան մը ընդունուեցաւ: Այս բոլորը 1927ի Միութեան Ժողովին տեղեկագրուեցաւ և մասնախումբը շարունակեց գործը հետապնդել:

Թերթի մասնախումբին անդամներուն մեծամասնութիւնը Հալէպի Շըրջանային Գործադիր Մարմինին անդամներ

ըն ըլլալով, նոյն մարմինը որչեց Տիար Տ. Խրլոբեանը հրաւիրել, որ Աթէնքի «Սքուլ ալ Ռիլիճըն»ը նոր աւարտած էր, թերթին խմբագրութիւնը վարելու միայն իր ժամանակին կէտը առոր յատկացնելով, Հալէպի մէջ Շըջանային Գ. Մարմինն ենթակայ ըլլալով:

Թերթը սկսաւ հրատարակուիլ 1927ի Դեկտեմբերի մէջ, 8 էջ հայերէն և 8 էջ անգլերէն, 16 էջնոց երկշաբաթաթերթի ձևով և տարբեր լովանդակութեամբ: Յանձնախումբը իր մէկ տարուան գործունէութեան տեղեկագիրը տուաւ 1928ի Միութեան Ժողովին. և իր պաշտօնին մէջ վերահաստատուեցաւ գործը շարունակելու համար:

Երկրորդ տարուան սկիզբը «նոր Աւետարներ»ը վերածուեցաւ նոյն լովանդակուածամբ 16 էջ հայերէն և 16 անգլերէն, երկու անջատ թերթերու, որոնց իւրանքանչիւրէն 400 օրինակ կը հրատարակուի:

Այս տարի Պոլսոյ մէջ Պօրտի Հրատարակչական Բաժինը թերթին համար 300 տոլար արամադրեց, և Հալէպի Շըրջանային Գործ. Մարմինը շարունակեց խմբագրին թշուկին համար կարգադրութիւններ ընել: Հրատարակչական Բաժինէն խնդրուեցաւ իր օգնութիւնը շարունակել 1929. 30 չըջանին ալ, բայց ապագային պատասխան մը չէ ստացուած:

Շատ փափաքելի է որ «նոր Աւետարներ»ի նպատակին և անոր հրատարակութեան պատճառներուն մասին յստակ

գաղափար մը կապուելի: Թերթին նըպատակն է Հայ Աւետ. Միութեան եկեղեցիներուն օգտին ծառայել: Ան յառաջ եկած չէ Րահմիւնա ի մէկ մրցակիցը ըլլալու ոչ ալ անոր տեղը գրաւելու, ոչ ալ նպատակ կայ որ ան Կոնստանտինուպոլսի Բայց եթէ Փրոֆ. Գրիգորեանի համար կարելի ըլլար Սուրիա գալ եւ Հալէպի մէջ «Րահմիւնա»ն հրատարակել, երկրորդ թերթի մը հրատարակումը նկատողութեան առնելու իսկ պէտք չպիտի զգացուէր:

«Նոր Աւետարեւոյթ»ին նպատակն է Միութեան գաղափարն մէջ աւետարանական գործը յստաջ տանիլ, եկեղեցիները իրարու կապել, բոլորին մասին ընթացիկ լուրերը հրատարակելով, և իրր հասարակաց պատգամարեւոյթը եկեղեցիները կանոնաւորապէս այցելելով: Անոր նպատակն է նաեւ եկեղեցիները ուսանողներէ իրենց կեանքին հետ կենսական կերպով յարաբերութիւն ունեցող խնդիրներու խորհրդակցութեանց և աւաջարկներուն մէջ: Թերթը երբէք չի ձգտիր կրօնական գաղափարի որոշ մէկ տիպը ներկայացնել, տնեկատ թողլով ուրիշները. բայց ան կը ձգտի ներկայացնել կենսական հոգեւոր կեանքը և փորձառութիւնը: Անոր նպատակը չէ երբէք գրական կամ գիտական թերթ մը ըլլալ, ոչ ալ հին «Աւետարեւոյթ»ին յարութիւն տալ: Կարեւորը թերթը չէ այլ եկեղեցին. թերթը միայն միջոց մըն է եկեղեցիին աւելի ազդու կերպով գործօն ըլլալուն համար:

Այս նպատակին իրադրոժումը անկարելի է պարզապէս իր ժամանակին կէսը թերթին յատկացնող խմբագրի մը և յանձնախումբի մը միջոցաւ: Պէտք է գործակցին բոլոր հովիւները, քարոզիչները եւ եկեղեցիները, պէտք է անոնք գիտակից կերպով զգան թերթին

նպատակը եւ անոր պէտքը: Կարելի նուազագոյն գին մը որոշուած է թերթին համար, եւ մանաւանդ զեղջեր կը կատարուին նոյն հասցէին մէկէ աւելի զրկուող օրինակներուն համար:

Ամէն եկեղեցիի իւրաքանչիւրը նախընտրէ մէջ «Նոր Աւետարեւոյթ»էն օրինակ մը պէտք է գտնուի, որ ան կարենայ իր նպատակին հասնիլ: «Իւրաքանչիւր եկեղեցի պէտք է պատասխանատուութիւնը ստանձնէ որոշ թիւով բաժանորդներ գտնելու կամ անոնց բաժնեկիները վճարելու: Զոր օրինակ 200 ընտանիքով եկեղեցի մը պէտք է 100 բաժանորդներ գտնէ կամ անոնց բաժնեկիները վճարէ: Այս կը նշանակէ թէ Աւետ. Համայնքին մէջ իւրաքանչիւր տասը հոգի պէտք է «Նոր Աւետարեւոյթ»էն օրինակ մը ունենայ: Այս կարելի եղած է Պէյլանի և Աղեքսանդրէթի մէջ. այս աղքատ եկեղեցիները պատիւը ունին այս մրցանիշը ունենալու:» Թերթը իր բաժինը պիտի ունենայ մանուկներու կրթութեան մէջ, ան իւրաքանչիւր անդամին պիտի օգնէ իր մտաւոր եւ հոգեւոր կեանքին զարգացման համար: Եթէ անձնապէս քեզի պէտք եղած բանը թերթին մէջ չեւ գտնիր, խմբագրին գրէ այդ մասին: Բայց միևնոյն ատեն խորհէ որ ամէնքս ալ թերթին մէջ մեր լաւագոյնը պէտք է դրնենք:

Իւրաքանչիւր եկեղեցիին մէջ նաեւ պէտք է որ ջանքեր թափուին թերթը աւելի օգտակար ընելու համար: Հովիւը բնական ժողովուրդին ուշադրութիւնը թող հրաւիրէ թերթին պարունակութեան կամ որոշ յօդուածներու մասին: Թերթը յառաջ մղենք, և չսպասենք որ ժողովուրդը ինքնաբերաբար զայ գայն առնելու համար:

Ճ. Է. Մէրիլ

307-ՈՒԱԾՆԵՐ

ՎԵՐՋԱՑՈՂ ԺՈՂՈՎԷՆ ԿԱՐԳ ՄՐ

ՏՊԱԽՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գրեց Զ. Ա. Պէգճեան

1. Բաղադրութիւն. նախապատե-
րազմեան ժողովին հետ. — Պատերազ-
մէն առաջ Միութեան տարեկան վերջին
ժողովը տեղի ունեցած էր 1914ի Յուլի-
սին, Այնթապի մէջ: Այդ ատենէ ի վեր
առաջին անգամ ըլլալով Միութեան — որ
Կիլիկիոյ Միութեան գրեթէ մէկ շարու-
նակութիւնը կ'երեւար — տարեկան մէկ
ժողովին մէջ ներկայ կը գտնուէի: Ի-
րարու հակառակ զգացումներով կը յուզ-
ուէի: Մէկ կողմէն վիշտով լեցուեցայ:
Հին դէմքերու մեծ մասը անյայտացած
էր, ապրող մի քանի պատկառելի դէմ-
քերը կը ջանային հինը նորին հետ միա-
ցընել և նախկին ժողովներու հոգին նս-
րին փոխանցել: Միւս կողմէն ինծի
համար անկարելի եղաւ Աստուծոյ
փառք չտալ: Տասնեւհինգամեայ փոթո-
րիկէ մը վերջ, որ բոլոր աշխարհը տակն
ու վրայ ըրաւ, հին Միութիւնը նորէն
ինքզինքը գտած, նոր դրօշի տակ, նոր
պարագաներու ներքեւ, ընդհանրապէս
նոր անդամներով իր նախկին գործը կը
շարունակէ: Շնորհակալութեան և շը-
նորհաւորումի արժանի պարագայ մըն է
այս: Բնականաբար այս ժողովը չի
կրնար նախկիններուն մակարդակին
վրայ գտնուիլ զայն կազմող անձնաւո-
րութիւնները նկատի առնելով:

2. Իբր ժողովատեղի Քէսապի ընտ-
րութիւնն ալ բարեպատեհ պարագայ
մըն էր: Եթէ չեմ սխալիր Միութիւնը
առաջին անգամ ըլլալով իր տարեկան
ընդհանուր ժողովը Քէսապի մէջ կը գու-
մարէր: Քէսապցիներու, էքիզ — Օլու-
զի և Գալատուրանի ժողովուրդներուն
ցուցուցած հիւրասիրութիւնները ակըն-
կալուածէն շատ աւելի ջերմ էին:

3. Ինծի համար ժողովին էն ազդե-
ցիկ մասը իր հոգեւոր գումարումներն
էին: Վերջին երկու օրերը մեծ մասամբ
այսպիսի ժողովներու յատկացուած էին:
Մր. Րիկզ և Տր. Մէրիլ այս ժողովնե-
րուն առաջնորդելու մէջ եւ ուրիշ կեր-
պերով մեծ ծառայութիւններ մատու-
ցած են:

4. Թէ՛ Միութեան և թէ՛ համաժո-
ղովին խորհրդակցութիւնները կատար-
եալ կանոնապահութեամբ եւ լուծութիւ-
նով կատարուեցան: Նոյնիսկ երբեմն
այնպէս խորհեցայ թէ պէտք եղածէն ա-
ւելի լուծութիւն կը տրուէր: Իցիւ թէ ա-
ւելի շատերը աւելի ջանային և համար-
ձակութիւնը ունենային կարգ մը խըն-
դիրներու մասին բաց կերպով արտա-
յայտուելու: Ժողովին կարեւոր ան-
դամներէն մէկը ինծի ըսաւ թէ — ամէն
բան բաց կերպով չենք խօսիր: Պէտք
չէ այսպէս ըլլալ: Կարգ մը անկիւննե-
րէն իշխանական հովեր կը փչէին:

5. Շատ ուրախալի եւ շնորհաւո-
րութեան արժանի պարագայ մըն է որ
Ամերիկայի Հայ Աւետչ. Ընկ.ը անցեալ
տարիէն 3000 տոլար աւելի յատկացու-
ցած էր Սուրիոյ Հայ Աւետ. Եկեղեցի-
ներուն: Կ'արժէ որ ժողովին կողմանէ
շնորհակալութիւն յայտնուի Աւետչ. Ըն-
կերակցութեան: Որոշ գաղափար մը
չունինք թէ այս յաւելեալ 3000 տոլարը
ի՞նչպէս գործածուեցաւ: Հաւաստի
տեղեկութեան համեմատ այս գումարին
կարեւոր մէկ մասը գործածուած է կարգ
մը հոգեւոր գործիչներու թոշակները ա-
ւելցնելու համար: Մեզի անծանօթ կը
մնայ թէ այս ո՛րչափ անհրաժեշտ էր եւ
որչափ անկողմնակալ հողիով կատար-
ուած է: Միայն սա յայտնի էր որ Ամե-
րիկայէն եկած բոլոր դրամին բաշխման
կերպին մասին բաւական դժգոհութիւն
կ'էզացուէր: Միութեան ամէնէն քիչ
զոհացում տուող մասը այս դրամական
խնդիրներն էին: Եւրէք իմաստուն եւ

արդար կարգադրութիւն մը չէր երեսարսա պարագան՝ թէ այս գրամին բաշխումին և սպառումին մէջ կարեւոր ձայն ունենան այն կարգ մը անձերը՝ որոնք իրենց և իրեններուն համար մեծ գումարներ կ'ստանան նոյն գրամէն: Կը անկնկալինք որ այս կէտերը խորհրդակցութեան նիւթ պիտի դառնան յառաջիկայ Միութեան ժողովին մէջ:

6. Այնպէս կը խորհինք թէ խորհրդակցութեան արժանի շատ կարեւոր կարգ մը խնդիրներ օրակարգի վրայ չէին գրուած: Ասոնցմէ մէկն էր Սուրիոյ Աւետ. համայնքին յարաբերութիւնը միւս ժողովուրդներու և եկեղեցիներու հետ, և ասկէ յառաջ եկած խնդիրները: Թերեւս ասկէ աւելի կարեւոր ուրիշ խնդիր մըն է Բողոքական երկրասարգութիւնը, անոնց մոռանալութիւնը, անոնց փորձանքները, անոնց ենթարկուած վտանգները, մեր եկեղեցիներուն անոնց հանդէպ պարտականութիւնները, եւայլն:

7. Ժողովին մէջ ամէնէն աւելի զօրաւոր կերպով զգացուող կէտերէն մէկն ալ՝ մեր դպրոցին, — որ ներկայիս Հալէպի Գոլէճ կը կոչուի օր առաջ կատարեալ Գոլէճի մը աստիճանին բարձրացման անհրաժեշտութիւնն էր: Մեծ պէտք կայ նոր, լուսամիտ, ուսեալ, բարեպաշտ, անձնուէր մարդերու: Յարմարագոյն հաստատութիւնը, օր կրնայ այս պէտքին զոհացում տալ «Հալէպի Գոլէճ»ն է:

8. Այս վերջացող ժողովը հակառակ իր կարգ մը թերութիւններուն վստահ ենք թէ հոգեւոր, մտաւոր եւ ուրիշ շատ մը կերպերով շատ օգտակար եղած է, և իրեն համար տրուած ժամանակը եւ եղած ծախքերը լիուրի վարձատրած է:

ԴԻՏՆԱԿԱՆՆԵՐԸ ԻՆՉ ԿՐ ԽՈՐՀԻՆ ՀՈԳԵՒՈՐ ԱՐԺԷՔՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

Բնական գիտութեան և կրօնքի միջեւ երեւութական հակառակութիւն հինէն ի վեր գոյութիւն ունեցած է, մեծ շփոթութեան մատնելով շատ մը միտքերը: Նիւթական աշխարհին իրողութիւնները և անտեսանիլի աշխարհին ճշմարտութիւնները իրարու հետ անհաշտիլի նկատուած եւ ներկայացուած են: Հակառակ շատերուն կողմանէ այս երկուքը հնչտեցնելու համար կ'ստարուած ջանքերուն՝ պայքարը տակաւին կը շարունակուի սաստիկ կերպով: Անոր իւր արդիւնք ժողովրդային խաւերուն մէջ սա սխալ համոզումը յառաջ եկած է՝ թէ գիտութիւնը անհաւատ է, և թէ հաւատքը չկորսնցնելու համար պէտք է հեռու մնալ գիտութեան եւ գիտնականներու ազդեցութիւններէն՝ մերժելով հետաքրքրութիւն անոնց գաղափարներովն ու տեսութիւններովը: Միւս կողմէն շատ մը գիտուններ, կամ իբր գիտուն իրենք զիրենք ներկայացնողներ, համոզուած են թէ հաւատքը և կրօնասիրութիւնը տգիտութեան արդիւնքներն են: Բայց պէտք է ըսել թէ ո՛չ տգիտութիւնը բարեպաշտութիւն է և ո՛չ ալ անհաւատութիւնը գիտնականութիւն: Աշխարհահոգեակ շատ մը գիտուններ կան ներկայիս որ ջերմ հաւատացողներ են հոգևոր ճշմարտութեանց: Հետեւեալ մէջբերումները սակաւաթիւ օրինակներէն են: —

Մեծն Բրիտանիոյ փիլիսոփայական Ընկերութեան նախագահը Սըր Ժօն Ամպրօք Ֆիլէմինկ, որ յայտնի է իր հնարած մի քանի գիւտերովը, այս տարուան սկիզբը «Բնականը և Գերբնականը» նիւթին շուրջ կատարած մէկ գաղափարութեան մէջ ըսելէ վերջ՝ թէ ինք կատարելապէս կը հաւատայ հրաշքներուն շարունակած է. «Քրիստոնէական եկեղե-

յիւն յանկարծակի ծագումը եւ զարգացումը կարելի չէ պատշաճօրէն բացատրել ունէ կերպով բացի անոր նախընթաց եւ զուգընթաց գերբնական դէպքերը ընդունելէ: . . . Քրիստոնեայ եկեղեցին ոչ միայն Քրիստոսի բարոյական վարդապետութեանց քարոզումովը շինուեցաւ, այլ յարութեան գերբնական դէպքին ականատես եղողներուն անխորտակելի վկայութեանը վրայ: . . . Մարմնացեալ Աստուածորդին գերբնական ոյժերը անզրտանալու կամ ուրանալու փորձը դայն կենդանաւոր ոյժէն զրկած է մարդկային բնութեան մահաբոյր ցաւերը բուժելու համար:»

Հարցում Շէֆլի, մեծագոյն աստղագէտներէն մէկը, Աստուծոյ զոյութեան համար իր կարծիքը յայտնելու համար կը յիշէ նիւթական զոյութիւններու հետեւեալ դասաւորումը զիտութեան ծանօթ եղող ամենապատիկ մարմինէն մինչեւ մեծագոյնը:

5— ?

4. Ենթահիւլէական մարմիններ (եւեքտրոն)
3. Հիւլէական մարմիններ, 92 տեսակ
2. Մասնիկային մարմիններ, հզուոր. տեսակ
1. Մածակերպեր եւ բիւրեղներ
0. Ենթամոլորակային (երկիր-լուսին, հայլն)
1. Մոլորակային գրութ. (ասուպներով աստղ մոլորակներով աստղ (Արեւ), գիսաւորներ հայլն)
2. Երկաստղեր, երեք տեսակ:
3. Բազմաստղեր.
4. Երբ կաթնային խմբաւորումներ, եօթը աստիճաններ.
5. Գնդաձեւ խմբաւորումներ, 12 կարգ.
6. Աստղային ամպեր, երկու տեսակ.
7. Ծիր կաթիններ, 60 կարգ.
8. Գեր-ծիրկաթնային զանգուածներ, 2 տես.
9. Գեր-ծիրկաթնային զանգուածներէ բաղկացած ամպեր:
10. Քողմփլազմ (կազի եւ փոշիի համաափիւռնէպուլա. եթեր, հայլն)
11. Տիեզերքը
12. — ?

Այս ցանկը յիշելէ վերջ զիտունը կը

շարունակէ. «Կը տեսնէք որ ենթահիւլէական, ալիւնքն անհրեակայիլօրէն պատիկ եղող մարմիններէն (4) առաջ եւ Տիեզերքէն, ալիւնքն անպարագրելիօրէն մեծ եղող մարմինէն (12) վերջ հարցանիչով զի՞ծեր զրուած են. ահա հոն կրնաք զրեւ Աստուած:»

— Էտիսըն Ամերիկայի մեծագոյն հնարիչը զիտնականներէն մէկը կ'ըսէ. «Այն երբէք չիմ կասկածիւ թէ Միտք մը կայ որ ամէն բանի վարիչն է: Զոր օր. ջուրը ա'ռ, որ իրը սառ. մեղի ծանօթ բիւրեղներ կը շինէ: Հարիւրաւոր բազաղրութիւններ, իսկ որոնք բիւրեղ կ'արտադրեն. բայց սառոյցէն զատ լոլորն ալ ջուրին մէջ կը սուզին: Կ'ըսեմ թէ սառը չի սուզիր եւ այս մեղի, մահկանացուներու համար շատ մեծ բաղդ մըն է, քանզի եթէ ան սուզէր մենք բոլորն ալ մեռած պիտի ըլլայինք: Պատճառը շատ պարզ է. եթէ սառը յառաջ եկածին պէս գետերու, ծովերու եւ ովկիանոսներու տակը սուզէր, բոլոր այդ տեղերը ամբողջութեամբ պիտի սառնին եւ մեղի երբէք ջուր պիտի չմնար: Ասիկա հազարաւորներէն միայն օրինակ մըն է որ անկասկածելիօրէն կ'ապացուցանէ թէ մեծ միտք մը այս աշխարհը կը կառավարէ:»

Փրօֆ. Արթըր Ս. Էտինկիլըն, որ Անգլիոյ առաջնակարգ աստղագէտներէն եւ բնագէտներէն մէկն է, Լօնտոնի մէջ ըրած իր դասախօսութեան մէջ կ'ըսէ. —

«Կրօնքի մէջ կեղրոնական հարցը աս է. Աստուած իրապէս զոյութիւն ունի՞: Ես այս հարցը մէկ կողմ կը դնեմ քանզի քննարկելու արժանի չեմ զանոյն յարակից խնդիրներ կը յարուցանէ, եւ ամէնէն վերջն ալ կրօնական փորձառութեան հասնելու չափ խորը չ'երթար: Մարդոց հարիւրին խնոտունը լըջօրէն նկատի չ'են առած թէ ինչ ըսել կ'ուզին «Գոյ է» բացատ-

բութեամբ և թէ ի՛նչպէս պէտք է որա-
կել այն որ «Իրական» պիտակը կը կրէ:

«Մեր մարդկային բարեկամներուն
գոյութիւնը արդէն տուեալ կը նկա-
տենք, եւ երբէք հոգ չենք ընել թէ ա-
նոնց գոյութիւնը ապացուցուած է թէ
չէ: Մեր յարաբերութիւնը այնպէս է
որ մենք մեր իրարու չգոյութիւնը փաս-
տող փիլիսոփայական ապացոյցներ կը
նանք կարգալ, և թերեւ անոնցմով հա-
մոզուել,— և ապա այսպիսի արտասոյց
եզրակացութեան մը վրայ խնդալ: Աս-
տուծոյ գոյութեան մասին տմէնէն ան-
թերի փաստը չի կրնար անոր տեղը
բռնել, և եթէ մենք բարեկամական յա-
րաբերութիւն ունինք Աստուծոյ հետ,
Անոր չգոյութեան մասին է՛ն համոզիչը
փաստը երբէք չպիտի ազդէ մեզի:

«Մեզի համար վճռական կէտը գե-
րազոյն Աստուծոյ մը գոյութեան մասին
համոզում մը չէ, այլ Գերագոյն Աստու-
ծոյ մը յայտնութեան համոզումը:

«Թերեւ ճիշդ է որ զիտական ըմբռ-
նումներու մէջ կատարուած նոր փոփո-
խութիւնները զիտութիւնը կրօնքի հետ
հաշտեցնելու համար ներկայ արգելքնե-
րէն ոմանք կը վերցնեն, բայց պէտք է
զգուշանալ կրօնքը զիտական գիւտերու
վրայ հաստատելէ: Եւ բոլորովին կը
հակառակիմ այսպիսի բան մը փորձելու:
Մենք սորվեցանք թէ բնական զիտու-
թեան միթոաներով արտաքին աշխարհի
խուզարկումը շօշափելի մէկ իրականու-
թեան չ'առաջնորդեր, այլ կը տանի
խորհրդանշաններու ստուերային աշ-
խարհի մը, որուն ներքեւ թափանցելու
անկարող են այդ միթոաները: Զգալով
որ անդին աւելին պէտք է գտնուի, ետ
կը դառնանք մարդկային զիտակցու-
թեան մէջ մեր մեկնած կէտին:

Մենք միայն մեր համոզումին համե-
մատ կրնանք պատասխանել, քանզի
բանականութիւնը մեզ բոլորովին ձա-
խողութեան կը մատնէ: Բանականու-

թիւնը մեզ տուեալներէն եզրակացու-
թեան մը կը տանի. առանց տուեալնե-
րու ան չի կրնար ձամբայ ելլել: Տե-
սանելի և նոյնպէս անտեսանելի աշխար,
հին մասին մեր տրամաբանութեան հա-
մար տուեալները մտքի ինքնաճանաչու-
մին մէջ կը գտնուին: Մենք կրնանք
և պէտք ենք հաւատալ թէ արժէքները
հասկնալու ներքին զգայարանք մ'ու-
նինք, որ մեզ կ'առաջնորդէ անոր որուն
պէտք է ուշ գնենք:

Աստուծոյ մասին մեր վստահութիւ-
նը՝ յարաբերութեան մը զիտակցութիւ-
նըն է քան թէ Անոր գոյութեան կատար-
եալ ապացոյցը:»

Աւելորդ կը նկատենք յիշել Տր. Մի-
լիքանի և Սըր Օլիվըր Լաճի նման մեծ
զիտուններու հաստատ համոզումները
Աստուծոյ գոյութեան և հոգեւոր ճշմար-
տութեանց մասին, ցուցնելու թէ զի-
տութիւնը և զիտնականը հակառակ չեն
կրօնքին:

Տ. Ճ. Խ.

ԳՆՁՈՒՆԵՐԸ

Այս թափառաշրջիկ ժողովուրդը, թի-
ւով մօտաւորապէս մէկ միլիօն եւ ցըր-
ուած Արեւմտեան Ասիոյ, Հիւս. Ափրի-
կէի, Եւրոպայի, Ամերիկայի և Աւստրա-
լիոյ մէջ, շատ հին ժամանակներու մէջ
Հնդկաստանէն զաղթած ցեղ մըն է, որ
երկու ճիւղերէ կը բազկանայ եւ երկու
հոտանքներով տարբեր ժամանակներուն
մէջ զէպ ի Արեւմուտք շարժած է: Ի-
րենց լեզուն հին Հնդկերէնի մէկ բար-
բառն է խառնուած իրենց մէջ տղրած
ժողովուրդներուն լեզուներէն առնուած
փոխառութիւններով: Իրենց կրօնքն
ալ խառնուրդ մ'է հեթանոսութեան եւ
իրենց մէջ ապրած ժողովուրդին կրօնա-
կան ըմբռնումներուն եւ սովորութիւն-
ներուն: Այնպէս որ Թուրքիոյ մէջ ա-
նոնց լեզուն խառնուրդ է Հնդկի հին

բարբառի մը եւ թուրքերէնի, իսկ կը-
րօնքնին՝ իսլամութեան եւ հեթանոսու-
թեան: Անոնք Քրիստոնեայ երկրի մը
մէջ իրենք զիրենք քրիստոնեայ կը ներ-
կայացնեն, պահելով շատ մը հնադար-
եան հեթանոսական սովորութիւններ:
Հայ Գնչուներու մասին, կատարուած
ուսումնասիրութիւնները գիտնականնե-
րը կարող ըրին անոնց լիզուին եւ ցեղա-
յին ծագումին մասին բանալի մը գտնե-
լու: Հետեւեալ յօդուածը ամփոփումն
է մէկ գրութեան, զոր Գօնրատ Պէրքօ-
զիչի՝ որ տարիներէ ի վեր գնչուներու
հետ ապրած եւ անոնց կեանքը ուսում-
նասիրած է — յաւակապէս (Տը Սեկրիֆըն
Մեկիզին)ի համար գրած է:

Մ. Խ.

Աշխարհի վրայ ցանցաւ կերպով
ցրուած գնչու ցեղերը տարբեր բարբառ-
ներ եւ օրէնքներ ունին. բայց բոլորն
ալ ունին հասարակաց օրէնք մը, որուն
աշխարհիս մէջ գտնուող ո՛ր է մէկ զըն-
չուն անպատճառ կը հպատակի: Ճիւ-
մակ մարդոց (գնչուները ընդհանրա-
պէս թխամորթ են) օրէնքին հնազանդիլ
իրենց համար անհրաժեշտ չէ. ճերմակ-
ներու օրէնքը զանց առնող գնչու մը
անպարկեշտ չի նկատուիր: Բայց զըն-
չու օրէնքին դէմ անհաւատարմութիւնը
անպատիժ չմնար. գնչու զաղտնի առ-
եանը, ուր որ ալ ըլլայ օրինազանցը կը
զանէ եւ կը պատժէ զայն: Գաղտնի
ուսուցանի կողմանէ տրուած մեծագոյն
պատիժը — մահուան պատիժն ետքը —
գնչուի մը համար աքոթ է, արտաք-
սումը կենդանի մահ է անոնց համար:
Մեծագոյն մեղքը իր ցեղին դէմ անհա-
ւատարմ գտնուիլ է:

Բոշաներու կեանքը ուսումնասիրող
ըզոյր մարդերը համաձայն են սա կէտին
մէջ թէ բոշա կին մը բարոյապէս մաքուր
եւ հաւատարմ է: Ամուսնական միակ
կապը սէրն է, ամուսինները քանի զի-
րար կը սիրեն միասին կ'ապրին. եւ երբ

մէկը կը զազրի իր ամուսինը սիրելէ ա-
մո անալուծում կը պահանջէ իր ցեղա-
պեաէն: Թուրքիոյ եւ Պալքաններու
մէջ բոշաները բազմակին են իսկ Սի-
պերիոյ մէջ բազմէրիկ:

Գնչու կիներու կամ էրիկներու մէջ
անհաւատարմութիւնը հազուադիւտ ու-
ճիրներէն է: Անոնց խանդոտ եւ զիւրա-
զրդիւ խառնուածքը, իրենց չաւակ-
ներուն շանդէպ սաստիկ նուիրումը
գնչու ընտանիքը միշտ երջանիկ կը պա-
հէ եւ մոռցնել կուտան իրարու թերու-
թիւնները:

Գնչուն կը հաւատայ թէ հիւանդու-
թիւնը անխնամութեան արդիւնքն է:
Հիւանդ ըլլալ ինք իրեն դէմ ոճիր գոր-
ծել է: Հետեւաբար հիւանդ մարդը
երբէք համակրանքի չի կրնար արժա-
նանալ: Գնչու լիզուին մէջ հիւանդու-
թեան եւ տխրութեան համար նոյն բառը
կը գործածեն: Տխուր մարդը հիւանդ
մարդ է: Արդի բժշկութիւնը ընդունած
է գնչուներու սա զաղափարը թէ հի-
ւանդութեանց մեծագոյն մասը հոգեբա-
նական է եւ ոչ թէ բնախօսական: Տըրտ-
մութիւնը շատ մը հիւանդութիւններու
մայրն է, ուրախ մարդը առողջ մարդն
է: Հետեւաբար հիւանդ գնչու մը բը-
ժշկիլ տեղ ջութակահար մը բերել կու-
տայ, կը ջանայ լսել ուրախ պատմու-
թիւններ եւ տեսնել խաղեր:

Գնչուները փոխանցիկ հիւանդու-
թեանց չեն հաւատար եւ կը խնդան ման-
րէններու եւ միքրոպներու վրայ: Պալ-
քաններու, Հար. Ֆրանսայի, Սպանիոյ,
եւ Անգլիոյ մէջ համաճարակներու միջո-
ցին իբր հիւանդապահ գնչուները կը
գործածեն, որոնք իրենց վրայ պարտա-
դրուած այս պաշտօնը հաւատարմու-
թեամբ կատարած են առանց վտրակ-
ուելու, հակառակ հիւանդներու հետ ի-
րենց ունեցած ամենատարած չփումին:
Այս իրականութեան պատճառն է անոնց
բացօթեայ կեանքը, չվարակուելու մա-

սին անոնց ունեցած հաւատքը և մանաւանդ անոնց անսպառելի զուարթութիւնը:

Գնչուները կ'ուտեն այնպիսի կերակուրներ որոնք ուրիշ մարդերը կրնային թունաւորել: Ճաշի համար որոշ ատեն չուներն այլ կուտեն այն ատեն միայն երբ անօթի են և ճաշելու ատեն կ'երգեն, կը խնդան և զուարճալի պատմութիւններ կը պատմեն: Գնչուները կը հաւատայ թէ երբ մէկը ինքն իրեն ուտել կը պարտադրէ, իր միտքը այդ կերակուրը թոյնի մը վերածէ: Տիրութիւնը թոյներ կ'արտադրէ իսկ երջանիկ և ուրախ արամադրութիւնը թունաւոր կերակուրը առողջարար ճաշի կը փոխէ:

Մինչ ընտանիքովս կը չրջէի Ռումանիոյ մէջ ցորենի արտի մը մէջ, կէս օր ատեն տեսայ որ խումբ մը գնչուներ կը գործեն, օգնելով արտին տիրոջ ցորենը կամակուռ մէջ: Գիւղացիները լուռ կ'աշխատէին բայց գնչուները անդադուր կը խնդային, կ'երգէին և կը շաղակրատէին: Կամակուռ մեքենային դադարը գնչու կին մը տեսայ որ ծանր որաները ծռելով կը վերցնէր և մեքենային մէջ կը դնէր. կինը յդի էր ծանրօրէն: Յանդիմանեցի մարդը այս թոյլատրելուն համար: Մինչ կը խօսակցէինք արտին տիրոջ հետ կ'ինքն ուրիշներուն օգնութեամբ մեքենային վրայէն վար իջաւ և ծեր կին մը գայն սրահներու հսկար առաջնորդեց. նոյն պահուն գնչուները զորքը ձգեցին և սկսան պարել ու երգել: Երկու մամետքը պղտիկ արարած մը կը շարժէր երկաթափող կնոջ մը զիւրկը, որ նստած տոպրակ կը կարէր իր նորածինին համար:

Իրիկունը բոլոր գնչուները չրջանակ մը կազմեցին նորածին երախային շուրջը որ կատարեւապէս մերկ էր և հիւսիսային հով մը կը փչէր, խրախճանքը տեսեց բոլոր զիւրկը: Այսպէս գնչուներ

իր ծնունդէն կ'սկսի վարժուիլ բացօթեայ կեանքին: Մահերու թիւը աւելի նուազ է գնչու մանուկներու մէջ քան թէ ունեւորի պղտիկներու մէջ:

Գնչուները յաւաքեն չի վախնար և գնչուները կը խորհին թէ կին մը երբէք այնքան զեղեցիկ չէ որքան այն ատեն երբ յդի է: Եթէ բոլոր մարդիկ այսպէս խորհէին հիմա աւելի դո՛ւ իրական սեռ մը պիտի ունենայինք: Գնչու մայրերը մինչև երկու տարի իրենց զաւակները անպառճառ իրենք կը դիպեցնեն իրենց կուրծքին վրայ. կենդանական կաթ երբէք չեն զործածեր. այս է ահա զապտնիքներէն մէկը անոնց առողջութեան:

Հնազանդութիւն ցեղային օրէնքին, ամուսնական հաւատարմութիւն և ընտանեկան սէր, զուարթ և բացօթեայ կեանք, մայրական զիկեցում—ահա տեսնեք են գնչու կեանքին բարեմասնութիւնները որոնք կրնան զատեր ըլլալ շատ մը քաղաքացիներուն:

Ամբիփեց՝ Տ. Ճ. Խ.

ԿՐՕՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

ԵՊԻՍԿՈՍԱԿԱՆ ԶԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Սեպտ. 29 ին, Կիրակի տոտուն Հալէպի Ս. Բառասուն Մանկանց Եկեղեցիին մէջ, Հալէպի Առաջնորդ Արտաւազգ և Դամասկոսի Առաջնորդ Խաչ Ծ. վարդապետները եպիսկոպոս ձեռնադրուեցան Տ. Տ. Ս. Սրբազան Խաչապետի կողմանէ ընկերակցութեամբ երեք եպիսոններու: Ներկայ էին քաղաքիս Ֆրանսական և Սուրիական իշխանութեանց ներկայացուցիչները, կրօնական պատեւրը, միսիօնարներ և այլն:

Այս առթիւ «Նոր Աւետարեւոր» կը յայտնէ իր ջիւղմազին մագթանքները և խորհրդակցութիւնները նորընծայ եպիսկոպոսներու:

ԳԻՏԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

ԿԵԱՆՔԻ ՇՈՂԵՐ

ԲԵՒԵՌԱՅԻՆ ԱՍՏՂԸ ՈՒՐ ԿԵՐԹԱՅ

ԳՆՁՈՒ ՄԱՐՏԻՐՈՍՈՒՀԻՆ

Ասկէ ճիշտ 173 տարի վերջը պատմական մարդուն մինչեւ հիմա անծանօթ լ. զոչ աննախընթաց դէպք մը պիտի պատահի:

Ծանօթ է թէ բեւեռային աստղը գտնուելու ի վեր ճամբորդներու համար իբր կողմնացոյց ուսանողի գերը կատարած է, միշտ հիւսիսային կողմը ցուցնելով իրեն նայող աչքերուն: Ասոր պատճառը այն է որ եթէ երկրի առանցքը երկարինք՝ անոր ծայրը գրեթէ բեւեռային աստղին պիտի գտնուէ:

Բայց պատմութիւնէն գիտենք որ բեւեռային աստղը Յոյներու կողմանէ իբր առաջնորդ չէր գործածուեր, քանզի մտնէ 2500 տարի առաջ երկնակամարին վրայ ան իր ներկայ դիրքէն բաւական հեռու կը գտնուէր: Աս կը նշանակէ թէ բեւեռային աստղը, որ անշարժ կ'երևայ աչքին, աւելանալուն կը շարժի եւ իբր տեղը կը փոխէ:

Եթէ մեր երկրին երկու բեւեռներէն ձող մը անցնենք, պիտի տեսնենք որ անոր ծայրը երկնակամարին վրայ չըլնանալ մը կը գտնուի, մեր երկրին գաղտնալու պատճառաւ: Հետեւաբար տարբեր դարերուն՝ տարբեր տեղերուն մէջ պիտի տեսնուի: Երկրի աստիճանքը 26000 տարուան մէջ կը գտնուի այս շրջանակը, գիտուններուն կատարած հաշիւներուն համեմատ: Այս կը նշանակէ թէ իւրաքանչիւր 26000 տարուան մէջ բեւեռային աստղը եւ հիւսիսային բեւեռը ճիշդ իրարու պիտի հանդիպին: Ահա այս դէպքն է որ, մարդկային պատմութիւն մէջ առաջին անգամ ըլլալով 2102ին պիտի պատահի:

Մեծ քաղաքի մը եկերքը զաշտի մը վրայ գնչուները իրենց խելքը հաստատած էին: Միսիօնարական մարմին մը, որ քաղաքին ծայրագոյն անկիւնը եւ քէմբին շատ մօտ տուն մը ընտրած էր հոն արթնութեան ժողովներ սարքելու համար, հակառակ իր բոլոր ջանքերուն երբէք չէր յաջողած գնչու մ'իսկ դարձի բերելու: Հետեւեալ պատմութիւնը զոր այդ մարմինն պատկանող հոգեւոր գործիչներէն մէկը կը պատմէ, կը ցուցնէ թէ ինչպէս Աստուած գնչու աղջկան մը միջոցաւ գործեց այդ թափառական ժողովուրդին մէջ:

«Դիշեր մը գուրս կայնած՝ մինչ անցորդները ներս գալու կը հրաւիրէի, ճիշդ ժողովին դիմացի կողմը գնչու աղջիկ մը տեսայ, որ անմիջապէս ժողովին հրաւիրեցի. բայց նա խնդաց, եւ գլուխը թօթուեց եւ ցատկոտելով անյայտացաւ: Մի քանի վայրկեան վերջը, սակայն, նա վերադարձաւ եւ ներս օրպարդելով սրահին մէջ ամենաեղի անկիւն մը դիրք գրաւեց: Ժողովը լրանալէն անմիջապէս վերջը մտադրեցի զայն տեսնել եւ հետը խօսակցել: Բայց ժողովը լրանալուն պէս, ունէ մէկը իրեն հետ խօսելու առիթ չունեցած, նա իսկոյն աներեւոյթ լողած էր:

«Բաւական տեսն մը անցաւ, առաքելութիւնը իր գործը վերջացնելու մօտ էր, երբ վերջին ժողովներէն մէկուն մէջ աղջիկը անգամ մ'ալ եկաւ եւ ճիշդ իմ ծնրադրած տեղս ինձի մօտեցաւ: Երբ ոտքի ելայ ու շարքութեամբ երեսն նույնիսկ նա ըսաւ. «Դուն զիս հոս հրաւիրեցիր, եւ ես կ'ուզեմ այս Յիսուսի մասին աւելի գիտնալ եւ հասկնալ թէ արդեօք Ան կ'ուզէ՞ օգնել թշուառ գնչու աղջիկի մը:» Ապա անոր պատմեցի Յի-

սուսի սէրին, Անոր խաչելութեան, մեղքի թողութեան մասին, զոր Ան կուտայ բոլոր զինքը իբր Փրկիչ ընդունողներուն: Այս միջոցին աղջիկին դէմքը շատ հիանալի պատկեր մը կը պատկերէր: մինչ անոր սիրտը փրկութեան ուրախութիւնովն ու խաղաղութեամբ կը լեցուէր:

Մեկնելէն առաջ նա ըստ. «Այս գիշեր հոս զաւուս համար բաւական պիտի տառապիմ: Ասկէ առաջ հոս գալէս վերջ երբ տուն վերադարձայ հայրս ինծի հարցուց թէ ես ո՛ւր գացի: Եւ երբ հասկցաւ թէ այս ժողովին ներկայ եղած եմ բարկացաւ, զիս անիծեց եւ սպառնաց զիս սպաննել եթէ երկրորդ անգամ հոս գամ: Բայց բան մը զիս հոս գալու մղեց: Հայրս սոսկալի զինեմով մ'է, և երբ կը խմէ կը կատարէ: Մայրս սակայն, այսպէս չէ և հօրս բարկութեան պահուն ան զիս կը պաշտպանէ: Գիշեր բարի, խնդրեմ, աղօթեցէ՛ք ինծի համար:»

«Այդ գիշերէն վերջ աղջիկը ա՛լ չտեսանք: Ատեն մը վերջը միայն սա ողբալի դէպքը հասկցանք:

«Աղջիկը իր բնակարանը (որ սայլէ մը կը բաղկանայ) վերադարձին մայրը դուրս դացած ըլլալուն համար միայն իր հօրը կը հանդիպի, որ զինիով կատաղած անոր երեսին կը պոռայ՝ «Ո՞ւր գացիր, լիտի՛ աղջիկ:» Աղջիկը կը պատմէ բոլոր եղելութիւնը և իր փրկութիւնը: Մի քանի մարդիկ դուրսը կայնած կը լսէին բոլոր այս խօսակցութիւնը: Նոյն պահուն անոնք կը լսեն հօրը սոսկալի մէկ երգումը և աղջիկին սրտակեղծք մէկ հառաչը: Անմիջապէս ներս կը մտնեն, բայց խեղճ պատիկին նուազած և արիւնլուայ մարմինը գետնի վրայ տարածուած կը տեսնեն միայն. իսկ հայրը, որ ձեռքը ծանր գօտի մը բռնած անոր քովը կը կայնէր, գօտին անկիւն մը կը նետէ և երերալով սայլին սան-

դու խներէն կ'իջնէ և իսկոյն կ'անհետի:

«Անմիջապէս մայրը կը կանչուի, որ զարհուրած կ'սկսի ազաղակել և անիծել իր ամուսինը՝ տեսնելով աղջիկին ճերմակ և անշարժ մարմինը և պուզին վրայ արիւնի հեռքերը: Մայրական սէրէ զրգուած իր լաւագոյնը կ'ընէ իր զաւակը ուշաբերելու համար, մինչև որ ան կամաց կամաց իր աչքերը կը բանայ և ժպտով կը փոխադարձէ իր խնամքը:

«Հետեւեալ առաւօտուն աղջիկը քիչ մը աւելի հանգիստ կ'երեւայ, բայց ան կ'ըսէ թէ կռնակին վրայ սաստիկ ցաւ մը կ'զգայ: Բժիշկ մը կը կանչուի, որ ցաւը քննելէ վերջ կը յայտնէ թէ գօտին ծանր ճարմանը մարմինն ներսին վնասած է, եւ վտանգ կայ որ մինչև կեանքին վերջը հաշմանդամ մնայ: Երբ լուրը տարածուեցաւ քէմբի մէջ բոլոր մարդիկ յուզուեցան և ամէնքն ալ ուղեցին իրենց զուգուրտ կարեկցութիւնը յայտնել: Հայրն ալ եկաւ անձկալի, վշտահար լուրջ և դալկացած դէմքով: Ժամերով ան կը նստէր ապշահար և լուռ բայց ոչ մէկ բան չէր կրնար ամօքել անոր կսկիծը:

«Մի քանի շաբաթներ անցան բայց տակաւին աղջիկը կը պառկէր տառապակոծ, կրելով իր խաչը եւ տալով իր վկայութիւնը և երբեմն երգելով «Շատ ուրախ եմ որ Յիսուս կը սիրէ զիս» երգը:

«Օր մը բժիշկը նորէն եկաւ, քննեց գոյն և ըստ որ թէպէտ վնասը զարմանուած է, սակայն ուրիշ հիւանդութեան մը նշանները սկսած են երեւնալ: Հետեւաբար աղջիկը սկսաւ օրէ օր տկարանալ, քանզի հիւսկալիս բոյն զրած էր մարմինն մէջ:

«Իր մեռնելէն օր մը առաջ ըսաւ. «Մայրիկ, կ'ուզե՞ս ինծի շնորհք մ'ընել. խնդրեմ մկրտող ինծի բեր»: Երբ այս խնդիրքը կատարուեցաւ նա գարձեալ ըսաւ. «Մա՛յր, խնդրեմ ինծի բեր այն

պընդը զոր ժողովի գացած զիշերըս հա-
գած էր:» Զարմացած մայրը բերաւ ա-
րիւնտ հագուստը, զոր տաւ աղջիկը
և մկրատով կտրեց անոր իր արիւնով
ներկուած մասը: Եւ ապա դողդոջուն
ձեռքերով զայն բռնած ըսաւ. «Մա՛յր,
կը խնդրեմ որ այս կտորը հայրիկին տաս
և իրեն պատմես թէ երբ անոր նայի յի-
շէ որ ես իրեն ներած եմ, եւ ազօթած
եմ որ ա՛յ երբէք չլսմէ. խնդրէ իրմէ որ
Յիսուսի մասին խորհի, որուն արիւնը
մեզ կը մաքրէ մեր բոլոր մեղքերէն, որ
խաչին վրայ չարչարուած է որ մենք
փրկուինք»:

«Վերջին զիշերն էր. աղջիկը ըսաւ
թէ ինքզինքը հանգիստ կ'զգայ. աչքե-
րը փակեց զանոնք բացաւ երկնային
փողօն մէջ: Երկու ծնողները իրենց
զաւակին անշնչացած մարմնին գով ի-
րենք զիրենք Բրիստոլի յանձնեցին:
Եւ այսպէս մտաւ յաւիտենական կեան-
քը գնչուներու քէմփին մէջ:»

ՄԱՐԴԷ ԿԱՄՈՒՐՋ

Տարիներ առաջ Լիվրպոլի մէջ Նա-
ւաստիներու Տունը հրդեհ մը ծագած էր.
հոն հաւաքուած մեծ բազմութիւն մը
սոսկումով տեսաւ թէ վերի յարկերուն
մէջ մարդիկ կային, որոնք օգնութիւն
կ'աղաղակէին: Պատրաստ բոլոր
սանդուխները մինչեւ այդ բարձրութիւ-
նը հասնելու չափ երկար չէին: Վեր-
ջապէս սանդուխ մ'ալ բերուեցաւ, բայց
տակաւին մի քանի մէթր երկայնու-
թեամբ տեղ կար ագէտքի մէջ եղողնե-
րուն հասնելու համար: Ապա բազ-
մութեան մէջէն Անգլիացի նաւաստի մը
յառաջացաւ, սանդուխն իվեր մագլցե-
ցաւ, ինքզինքը հաւասարակշռելով ոտ-
քերը վերջին աստիճանին վրայ դրաւ
և երկու ձեռքերով ննջարանի պատու-
հանին եզերքներէն բռնեց ու պոռաց.
«Ծու՛տ, մարմնիս վրայէն վա՛ր սողաւ
կիցէք և վար իջէք:» Բոլոր մարդիկ

մէկիկ մէկիկ վար իջան և ազատեցան և
ամենէն վերջը նաւաստին իջաւ, ձեռ-
քերը, երեսը և բոլոր մագերը այրած:

Սանդուխը բաւական երկար էր,
բայց մարդերը կարենալ ազատուելէն
առաջ մարդու մը երկարութիւնը պէտք
էր: Նմանապէս մեր ընկերային բա-
րեգործութեանց սանդուխները երկար
կրնան ըլլալ բայց մեր հետապնդած
նպատակին հասնելէ առաջ պէտք ու-
նինք մարդու մը երկայնութեան—Թի-
սուսի որ մեր Տէրն է:

ԱՅՐԻ ԿՆՈՋ ՄԸ ԼՈՒՄԱՆ

Կին մը երբ մեծ եկեղեցիի մը քարո-
զասրահէն վար կիջնար վայրկեան մը
կանգ տաւ, ապա դրամ մը ձկեց կրօ-
նականին ձեռքը, զոր քարեկու համար
երկարած էր: «Հաճեցէք ընդունիլ
այս», ըսաւ կինը, «չատ ջնջին բան մ'է,
բայց ես մխիթարուեցայ:»

Կրօնականը նուէրին նայեցաւ, եւ
տեսաւ որ յիշուի ան պղտիկ գումար
մէք, հինգ սէնթնոց նիքէլ դրամ մը:
Վերջը ան հասկցաւ որ կինը անգործ
մնացած էր եւ շատ տառապած բայց
մխիթարուած:

ԱԻՏՏԱՐԱՆԱԿԱՆ ԿԵԱՆՔ

ՎԵՐՋԱՑՈՂ ՄԻՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎԻՆ ԿԱՐԵՒՈՐ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԷՆ

ԱԶԳԱՊԵՏԻ ՄԸ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՒՆ
ՆԸ ՆԿԱՏԻ ՈՒՆԵԼՈՎ՝ ՓՐՕՓ. Զ. ՊԵՂՃԵԱՆ,
Կ. Պոլսոյ նախկին Ազգապետը, հրա-
ւիրուեցաւ նոյն պաշտօնին: Հայ Աւետ.
Եկեղեցին պէտքն ունի ինքնամփոփ-
ման և կատարեալ կազմակերպութեան,
և անհրաժեշտ պէտքն ունի կարող ձեռ-
քի մը՝ պաշտօնական մարմիններու հետ
յարաբերութիւն ընելու եւ այսպէս իր
չահերը պաշտպանելու համար: Փրօֆ.

Պէգնեանի նման փորձառու ոյժի մը այս պաշտօնին հրաւիրուիլը խիստ ուրախալի պէպք մըն է, զոր յաջողցնելու համար պէտք է պատրաստել անհրաժեշտ գումարը, զոր կը յուսանք թէ կարելի պիտի ըլլայ հայթայթել ներքին և արտաքին աղբիւրներու օժանդակութեամբ:

ՄԻՈՒԹԵԱՆ ՆՈՐ ԱՆԴԱՄ ընտրուեցաւ գահիբէի Հայ Աւետ. եկեղեցին, զոր կը ներկայացնէր Տիար Խ. Կիւզէլիմեան: Կը յուսանք թէ այս ուրախալի և շնորհաւորելի պարագան նախաքայլը պիտի ըլլայ Մերձաւոր Արեւելքի Հայ Աւետ. Միութեան կազմակերպումը:

Ի ՆՇԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹԵԱՆ և երախտագիտութեան որոշուեցաւ բոլոր եկեղեցիներու մասնակցութեամբ զբաժանուիլ նուէր մ'ընել փոքր. Յովհ. Գ. Գրիգորեանի, իր ծննդեան 75երորդ տարեկարծին առթիւ: Այս հին արգիւնաշատ անխոնջ փաստաւորին մասին համաժողովին առաւ այս ազնիւ քայլը ուրախութեամբ կ'արձանագրենք:

ՄԵՐՋԱՒՈՐ ԱՔԵՒԵԼՔԻ ՄԷՋ գործող միութեամբական մարմինները կազմած են Միջպագային Միութեամբական Խորհուրդ մը, որ իրեն անդամակցելու համար հրաւեր զրկած է Հայ Աւետ. Միութեան: Միութիւնը այս հրաւերը սիրով ընդունեց և տեղեկացուց Մր. Բիկօին հաղորդելու համար պատկան մարմինը:

ՍԱՀԱՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՄԸ ՊԷՏՔԸ խիստ զգալի զարձակ էր ատենէ մ'ի վեր: Կ. Յարութեանի կողմանէ խմբագրուած սահմանադրութիւն մը ներկայացուեցաւ ժողովին, որ զայն յանձնեց եկեղեցիներու ուշադրութեան և մասնաւորապէս ընթրուած յանձնախումբի մը, զայն ուսումնասիրելով յառաջիկայ տարուան ժողովին իրենց թելադրութիւնները բերելու համար:

ՏՐ. Փ. ՊԷՐՕՆ ԻՆՉ Կ'ԸՆԴ ՊՐԱՆՍԱՀԱՅՐԱՆՆ ՄԱՍԻՆ

«Աքսիօն Բրէթիէն ան Օրիան» Պրանսական միութեամբական ընկերութեան նախագահը Տր. Պէրօն քաղաքս կը զբոսնուի ներկայիս, որուն հետ մեր ունեցած տեսակցութեան միջոցին յիշեալ ընկերութեան գործունէութեան մասին մեր ստացած տեղեկութիւնները կը հաղորդենք մեր ընթերցողներուն:—

Այս ընկերութիւնը իրեն գործի դաշտը նստած է Պրանսաի Հայերը և Սուրիան, ուր նաեւ գրեթէ իր բոլոր ոյժը արամադրած է Հայերուն: Պրանսաի Հայ պաշտականները, թիւով 57, 000, հաստատուած մեծ մասամբ երեք կիզրոնները.—Մարսիլիա, Լիօն, Փարիզ և անոնց շրջակայքը—, տնտեսապէս աւելի բարեւոք վիճակ մ'ունին այս տարի բազմամամբ առջի տարիներուն: Այն ժըրանսացիները որոնք մօտէն ծանօթացած են Հայերուն մեծապէս գնահատած են զանոնք՝ յարգանք և կարեկցութիւն յայտնելով անոնց կորովին և վշտին հանդէպ:

Մօտաւորապէս 15 զանազան վայրի ու մէջ Հայ Աւետ. ներք կանոնաւոր համայնքներ կազմած են և կանոնաւոր կրօնական պաշտամունքներ կուսենան օտար կրօնական հաստատութիւններու և կամ վարձուած շէնքերու մէջ. միայն Տէսինի մէջ իրենց յատուկ եկեղեցական շէնք մ'ունին: Պրանսաի Հայ Աւետ. եկեղեցւոյ տարեկան պիւտճէն 1927ի մէջ եղած է 404, 000 Պրանս. Պրանք, որ հայթայթուած է Հայ Աւետ. տեղական եկեղեցիներէ, Աքսիօն Բրէթիէնի, Ժընէվի Աւետ. Ընկերութեան (Société Evangelique de Genève) և Ամերիկայի Հայ Աւետ. Ընկերակցութեան կողմանէ: Պրանսաի Հայ Աւետ. եկեղեցին անկախ կազմակերպութիւն մ'է և ենթակայ չէ ուրիշ ոեւէ Բող. եկեղեցիի մը: Ան

Թուրքիոյ Հայ Աւետ. Եկեղեցիին մէկ շնորհաւորութիւնն է Ֆրանսոսի մէջ: Հակառակ տարբեր Բող. եկեղեցիներու կողմէ կատարուած մարդորսական ջանքերուն և յայտնուած փափաքներուն Տր. Պէրօն միշտ աշխատած է և յաջողած է Հայ Աւետ. ներք բաժան բաժան շննկու և իրր անջատ աւետարանական մարմին մը անոր ինքնութիւնը պահելու: Շատ հետաքրքրական է գիտնալ թէ այս եկեղեցիները Միութիւն մը կազմած և սահմանադրութիւն մ'աւ ընդունած են, որուն կարեւոր կէտերէն ոմանք են. — 1) Դարձի փորձառութիւնը և հոգեւոր կեանք ունեցողը կրնայ անգամ ըլլալ: 2) Մկրտութիւնը ընդունելի է իր երկու ձեւերովը, մանուկներու և հաւատացող չափահասներու, 3) Հաղորդութիւնը բաց է ոչ միայն անգամներու, այլ բոլոր հոգեւոր կեանքի տէր անհասներու: Այսպէս շատ մը հոգեւոր Առաքելականներ Հաղորդութեան կըրնան մասնակցել: 4) Կիները կրնան քուէ տալ, բայց չեն կրնար քուէ տոնել: 5) Սինոդը, Միութեան ժողովը, ամէն տարի Սեպ. ին տեղի կ'ունենայ:

Ֆրանսոսի Հայ Աւետ. Եկեղեցիին գործադիր իշխանութիւնը յանձնուած է վեց անդամէ բաղկացեալ մարմնի մը, որուն անդամներէն երեքը Աքսիօն Քրէթիէնի ներկայացուցիչներն են, եւ երեքը՝ Հայ Աւետ. Եկեղեցւոյ:

Աքսիօն Քրէթիէնէ և Ժընէվի Աւետ. Բնկերութիւնէն գաւ Հայերու մէջ գործող ուրիշ մարմին մ'ալ կայ, որ կը կոչուի Փարիզի Բող. Ֆրանսացիներու Հայանպաստ Կոմիտէն: Այս վերջինը սերա յարաբերութեան մէջ է Աքսիօն Քրէթիէնի հետ եւ իր գործակցութեան բաժինը կը բերէ բարեգործական մարդի մէջ:

ՄԻՍ ՆՕՐԹԸՆ ՎԵՐԱԴԱՐՁՈՒՄ

Հալէպի Աղջկանց Բարձրագոյն Վարժարանի Վարժուհիներէն Միս Նօրթըն իր արձակուրդի տնին Սմերիկայի մէջ լրացուցած ըլլալով վերագործած է քաղաքս և իր գործին ձեռնարկած:

ՄԻՍ ԶԻԼՍԸՆ ՊԵՅՐՈՒԹԻ ՄԷՋ

Պրուսայի միաթնարներէն Միս Զիլսըն, որ Թուրք աղջկներու մէջ կրօնական փրօփականտ մղելու ամբաստանութեամբ Թուրք պատարանի յանձնուած և հոն զրամական տուգանքի ենթարկուած էր, Թուրքիոյ մէջ գործել իրեն արգելուած ըլլալով Պօրտի կողմէ Պէյրութ զրկուած է իրր ուսուցչուհի զործելու համար տեղոյն Ամերիկեան Աղջկանց Վարժարանին մէջ, որուն տընօրէնուհին է Միս Ուէպ:

ՊՐ. ԲԱՐԾԱՅՐԻ ՄԱՀԸ

Վեր. Ե. Կէօքէօղլան մեղի գրած մէկ նամակին մէջ կը գուժէ մահը Տիար Պետրոս Քարծայրի, տնօրէնը Հայ Բող. Մանչերու Վարժարանին, զոր հանգուցեալը նախակրթարանի մը ստաիճանէն բարձրագոյնի մակարդակին վրայ կըրցած էր բարձրացնել իր անձնուէր եւ անխոնջ ջանքերուն շնորհիւ: Թաղման տխուր արարողութիւնը կատարուած է 8 Սեբ., Կիրակի առտուն, իր մահուան օրը, ծովածաւալ բազմութեան մը ներկայութեան և չորս լեզուներով զամբանակոններ խօսուած են: Ողբացեալը, որ առկա ին 39 տարեկան էր, իր ետին կը թողու երկու մանուկներ, իր տիկինը, և շատ մը պարագաներ խոր սուգի մասնուած: Պր. Բարձայրի մահովը գործօն և փորձառու կրթական մշակ մըն ալ անյայտացաւ: Մեր խորին ցաւակցութիւնները կը յայտնենք հանգուցեալին պարագաներուն:

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷԶԸ

ԾՆՈՒՆԴԻ ԵՐԳԸ

Ազատ քաղաքացիական Չարս Տիբեթի
գրաւածներէն

ԳԼՈՒԽ Ա.

ՄԱՐԴԻ ՈՒԻՆ

Ու հազիւ կրցաւ իր աչքը վեր վեր-
ցընել, նոր տեսաւ ոգին ուղիղ դիրքով
իր դէմը կանգնած, ու չղթաները թի-
ւերուն փաթթած:

Ոգին հա ետ գնաց, և իր իւրաքան-
չիւր քայլափոխին ետեւի պատին պա-
տուհանին ապակի փեղկերը ծանր ծանր
բացուեցաւ, այնպէս որ երբ ոգին հոն
հասաւ պատուհանը բոլորովին բացուած
էր: Այն ատեն ձեռքով նշան ըրաւ,
Սքրուէին, որ մօտը գայ: Սքրուէ մօ-
տեցաւ: Երբ երկու քայլ միայն մնաց,
ոգին ձեռքը վեր վերցուց՝ որպէս զի ա-
ւելի չը մօտենայ: Սքրուէ կեցաւ, ոչ
այնքան հնազանդելուն համար, այլ ա-
ւելի վարմանքի ու վախի բերումով, ո-
րովհետեւ երբ ոգին ձեռքը բարձրացուց,
Սքրուէ զգաց որ ոգին մէջ խառնաչփոթ
ձայներ կը լսուէին. ողբի ու զղջման
ձայներ՝ որոնք իրարու հետ կապակցու-
թիւն չունէին, լացուկոծեր, որոնք ան-
նշկարադրելի վիշտ ու յանցանքի խոս-
տովանութիւն կ'արտայայտէին: Եւ
ոգին՝ վայրկեան մը մտիկ ընելէ վերջ՝
ինքն եւս իր ողբի ձայնը միացուց անոնց
տխուր վայոցին, և տատանելով դուրս
սահեցաւ պատուհանէն դէպի ցուրտ ու
խաւար գիշերուան խոր մթութիւնը:

Սքրուէ պատուհանը վազեց, հետա-
քըքրութեամբ դուրս նայեցաւ: Խնչ
մեծ եղաւ վարմանքը երբ տեսաւ որ օ-
ղը լեցուն էր ոգին երով՝ որոնք անհան-
գիստ քայլերով միշտ կը շարժէին արագ
արագ, ու միեւնոյն ատեն ողբ ու կոծով
կ'աւազէին:

Տակաւ առ տակաւ աս ոգիները մա-

ռախուղի՞ փոխուեցան թէ մառախուղը
զանոնք չըջապատեց ու աներեւութա-
ցուց, յայտնի չեղաւ, բայց անոնք և ի-
րենց ողբի ձայները միասին կ'որոտե-
ցան, և գիշերը նորէն իր նախկին հան-
գարտութիւնը վերստացաւ:

Սքրուէ պատուհանը գոցեց, գնաց
դուռը քննեց՝ և տեսաւ որ դրան երկու
կղպանքներն ալ կղպուած էին, ճիշտ
այնպէս՝ ինչպէս որ ներս մտած ատեն
ինք կղպած էր: Հապա ոգին ինչպիսի
ներս մտեր էր... «Կրող» պիտի ըսէր՝
նորէն, բայց չը կրցաւ ըսել: Շատ յոգ-
նած էր, իր զգացած յուզումը, օրուան
յոգնութիւնը, անտեսանելի աշխարհի
տեսիլքները, ոգիին տխրագոյնիկ խօ-
սակցութիւնը, ու գիշերուան այդ ուշ
պահը զգալի կ'ընէին քունի ու հանգիս-
տի անհրաժեշտ պէտքը, ուստի առանց
հանուելու անկողին մտաւ, ու անմի-
ջապէս քնացաւ: (Շար.) (9)

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑԻ ԴԱՍԵՐ

Հոկտեմբեր 13

ՈՒՐԻՇՆԵՐՈՒՆ ՍԻՐՈՅՆ ՀԱՄԱՐ ՄԻՇՏ

ԱՐԹՈՒՆ ԵՒ ԺՈՒԺԿԱՆ ՄՆԱԼ

Դաս—Դան. 1. 8-20:

Հոկտեմբեր 20

ՕԳՏԱԿԱՐ ԴՈՐԾԸ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ

ՊՍՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՄԸՆ Է

Դաս—Եփես. 4. 28:

Հոկտեմբեր 27

ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԵԱՆ ՏԵՍԱԿԷՏԸ

ԺՂՄԱՆՑԻ ԵՒ ՀԱՆԳԻՍՏԻ ՄՈՍԻՆ

Դաս—Մարկ. 2. 18-28:

Նոյեմբեր 3

ՅԱՐԳԱՆԲ ՀԱՆԴԷՊ ՕՐԻՆԱԽՈՐ

ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ

Դաս—Մարկ. 12. 13-17: Հոովմ. 13.

1-7: Ա. Պետ. 2. 13-16:

صاحب الامتياز و مدير المسئول

قنيس قره بت هاروتونيان